ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՏԱԹԵՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Ռուսական կայսրությունը էլ ավելի սաստկացրեց իր գաղութատիրական քաղաքականությունը: Նա մտադիր էր ամբողջովին ռուսականացնել Այսրկովկասը թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական և թե՛ մշակութային առումներով: Կայսրությունը չէր հանդուրժում ազգային փոքրամասնությունների ինքնավարության որևէ ձև և վարչաքաղաքական բաժանումներում մերժում էր էթնիկության սկզբունքը: Ցարական իշխանությունները կայսրության հպատակ ժողովուրդներին առավել հեշտ ղեկավարելու նպատակով դիմում էին «բաժանիր, որ տիրես» սկզբունքին: Կայսրությունը ազգերին բաժանում էր «առաջավորների» և «հետամնացների» և հույս ուներ, որ երկրում ապրող մուսուլմանները կհրաժարվեն իրենց ավանդույթներից և կձուլվեն[1]: Կովկասյան թաթարները չունեին ազգային հստակ ինքնագիտակցություն: Թաթարական համայնքը գիտակցում էր միայն սունիների ու շիաների, քրիստոնյաների ու մուսուլմանների, նստակյացների ու քոչվորների միջև տարբերությունը, իսկ ազգ հասկացությունը նրանց համար ոչինչ չէր նշանակում: Նրանք ապրում էին մեկուսացված, չունեին որևէ հարաբերություն պետական իշխանության հետ, իրենց համարում էին մուսուլմանական մեկ ընդհանուր համայնքի անդամ[2]:

Պետք է փաստել, որ 19-րդ դարի 2-րդ կեսին հատկապես Եվրոպայի տարածքում ծավալված ազգային ակտիվ շարժումներից զերծ չմնաց նաև Կովկասը: Հայ իրականության մեջ 1860-70-ական թթ. տարբեր խմբակների և շարժումների ստեղծման շրջան էր, իսկ ավելի ուշ ծնունդ առան առաջին քաղաքական կուսակցությունները, որոնք, ծրագրային տարբերություններով հանդերձ, ձևակերպում էին ազգային խնդիրների լուծման իրենց տեսլականը: Հարավային Կովկասի թյուրքալեզու բնակիչներով տարածքներում այս ամենը փոքր-ինչ տարբեր էր: Էթնիկ ինքնագիտակցությունը բազմիցս ստորադասվում էր խմբային ու կրոնական կամ ինքնագիտակցության այլ տեսակնե-

[1] Տե՛ս **Баберовски Й.** Враг есть везде. Сталинизм на Кавказе // «Фонд Президентский центр Б. Н. Ельцина». М., 2010, էջ 74:

[2] Տե՛ս նույն տեղը:

ին: Այսրկովկասի թաթարների շրջանում դեռևս ձևավորված չէր ազգային հավաքական ինքնագիտակցությունը. ոչ միայն հարևանները, այլև իրենք իրենց դեռևս հստակ չէին տարանջատում մյուս մահմեդականներից: Թաթարներն իրենց զգում էին ամբողջ մահմեդական աշխարհի մի մասնիկը կամ Ռուսաստանի թյուրքալեզու բնակչության բաղկացուցիչ մասը: Այս առումով բավական խոսուն է լեհ պատմաբան, ադրբեջանագետ Թադեուշ Սվյատոխովսկու աշխատության վերնագիրը՝ «Ռուսական Ադրբեջանը 1905-1920 թթ. ազգային ինքնագիտակցության ձևավորումը իսլամական համայնքում»[3]: Մուսուլման ազգայնականների հայտարարությունները, թե Բաքվի և Ելիզավետպոլի մուսուլմանները պատկանում են ադրբեջանական էթնոսին, լայն տարածում չէին գտնում ժողովրդի շրջանում: Ադրբեջանցի էթնոսի ձևավորումը առավել արմատավորվեց խորհրդային տարիներին:

Ըստ ամերիկացի հետազոտող Մայքլ Քրոյսանտի՝ 19-րդ դարի վերջին ռուսական կայսրության տնտեսական զարգացումները նպաստեցին հայերի ու ադրբեջանցիների միջև սոցիալական շերտավորման խորացմանը. ադրբեջանցիները հիմնականում աղքատ էին, առավելապես զբաղված էին քոչվոր անասնապահությամբ, մինչդեռ հայերը նստակյաց էին, քաղաքներում առևտրական և ձեռնարկատիրական գործունեություն էին ծավալում, վարում եկամտաբեր պաշտոններ: Այս իրողությունները «ադրբեջանցիների» շրջանում առաջացնում էին հակահայկական տրամադրություններ: Իսկ ադրբեջանցիների կրթված խավը համակված էր պանթյուրքիստական տրամադրություններով[4]:

Բուրժուազիան ցանկացած միջավայրում, այդ թվում հայկական ու թյուրքալեզու, միշտ փորձում էր ազդեցություն ապահովել ազգային արժեքների միջոցով և օգնությամբ: Այսինքն՝ ձևավորվող թյուրքական բուրժուազիան ձգտում էր քաղաքական ու տնտեսական իշխանության, իսկ սա նշանակում էր հակասություն առաջին հերթին բավականին ամուր դիրքեր ունեցող հայկական համայնքի հետ: Բաքուն ռուսական և համաշխարհային նավթաարդյունաբերական խոշոր կենտրոններից էր: Այնտեղ էր հավաքված թաթար էթնոսի ընտրանին՝ ոչ միայն թուրք բուրժուազիան, հանքատերերի դասակարգն իր վիթխարի հարստությունով, այլև ազդեցիկ կղերը՝ մոլեռանդ ու հայատյաց, որը ղեկավարվում էր Ստամբուլից:

19-րդ դարի 80-ական թթ. ծայր առավ հայերի ստվար հոսքը Բաքու, որտեղ նոր-նոր էր սկսվում նավթի մշակությունն արևմտյան եղանակներով: Ռուսների, հրեաների, եվրոպացիների հետ հայ վաճառականները սկսեցին թաթարներից գնել նավթահանքերը և ընդամենը 30 տարվա ընթացքում հայերը ոչ միայն պատկառելի հարստություն

---

[3] http://www.kitabxana.me/sventoch.htm (մուտք՝ 06.11.2018)

[4] Տե՛ս **Տ. Հայրապետյան,** Ներքաղաքական գործընթացները Ադրբեջանում 1988-1998 թվականներին, Եր., 2018, էջ 16:

կուտակեցին, այլև հայտնի մտավորականներով, ճարտարագետներով և մասնագետներով գրավեց նավթաշխարհը, տեր դարձավ փայլուն, առաջնակարգ պաշտոնների: Ահա այս հանգամանքն էր, որ գրգռում էր տեղացի մահմեդականներին[5]:

Կովկասում ցարական Ռուսաստանի վարած գաղութացման քաղաքականությունից առավելապես տուժեց հայ ժողովուրդը, որը մյուս ազգությունների համեմատ աչքի էր ընկնում մշակութային և ազգային ինքնագիտակցության բարձր մակարդակով: Այսրկովկասի ռուսականացման ճանապարհին հնարավոր չէր հաշվի չառնել արդեն կայացած հայ մտավորականության գործոնը, ուստի հեղափոխական հնարավոր շարժումներից խուսափելու նպատակով գործի դրվեց ազգամիջյան բախումներ հրահրելու քաղաքականությունը: Հայերի և վրացիների պարագայում մեծ դեր էին խաղում մշակութային, կրոնական ընդհանրությունները և դարեր շարունակ ունեցած շփումները: Ուստի ռուսների՝ վրացիներին հայկական կապիտալով և հարստություններով շահագրգռելու փորձերը հաջողություն չունեցան: Այդ առումով առավել նպատակահարմար էր հայերի դեմ գրգռել մշակութապես առավել հետամնաց կովկասյան թաթարներին[6]: Այսրկովկասի քաղաքներում ռուսական ոչ բավարար ազդեցությունը ուժեղացնելու և հայկական ընտրանու դիրքերը սասանելու նպատակով ցարական իշխանությունը սկսեց հրահրել հայ-մահմեդական բախումներ[7]: Դաշնակցական գործիչ Միքայել Վարանդյանը հաստատում է, որ ռուսական տիրապետության տակ հայերն ու թաթարները «հաշտ ու խաղաղ» էին ապրում, իսկ գավառներում պահպանում էին «բարեկամական պարզ, անկեղծ հարաբերություններ»: «Անակնկալ հրդեհի բռնկումը» նա բացատրում էր տնտեսական, քաղաքական, մշակութային, կրոնական գործոններով[8]: Թադեուշ Սվյատոխովսկին ևս փաստում է, որ մինչ այս բախումները թե՛ թաթարները, թե՛ հայերը հաշտ են ապրել, եթե եղել են որոշակի հակասություններ, ապա դրանք արագորեն հարթվել են և չեն հասել առճակատման: Նա նշում է, որ թաթարական ազգային շարժման ներկայացուցիչները հետագայում վկայում են, որ հայերի շրջանում իշխանությունները տարածում էին այն գաղափարները, թե մուսուլմանական համայնքում պանիսլամական գաղափարները խոր արմատներ են գցել, և դրանք վաղ թե ուշ իրագործվելու են, և դրանով փորձում էին ցույց տալ, որ հայերը կրկին ոչնչացման վտանգի առաջ են: Իր հերթին թաթարների շրջանում էլ տարածում էին, թե իրենք տնտեսական և այլ առումներով

---

[5] Տե՛ս https://www.aniarc.am/2015/09/04/armeno-tatarazerbaijan-clashes-1905-1906-armenian-text/ (մուտք՝ 26.10.2018):

[6] Տե՛ս **Амфитеатров А.** Армянский вопрос. Ер., 2015, 108, էջ 31-32:

[7] Տե՛ս **Баберовски Й.,** նշվ. աշխ., էջ 73:

[8] Տե՛ս https://www.aniarc.am/2015/04/02/armenian-tatar-azeri-clashes-1905-07/ (մուտք՝ 26.10.2018):

կախված են հայերից և առավել հետամնաց են[9]: Սվյատոխովսկին գտնում է, որ թշնամանքի սրման պատճառն այն էր, որ հայերը, կողք կողքի ապրելով մուսուլմանների հետ, իրենց քաղաքակրթվածության մակարդակով ավելի բարձր էին: Հայերի առավելությունն այն էր, որ նրանք կարողանում էին արագորեն հարմարվել նոր միջավայրին և կարճ ժամանակ անց բարձր դիրքի հասնել: Նրանք որպես ազգ արդեն կայացած էին, ունեին ազգային ինքնագիտակցություն՝ ի տարբերություն թաթարների, որոնք դեռևս չէին ընկալում իրենց ազգային պատկանելությունը: Ցարական Ռուսաստանի կազմում հայերը կարողացան օգտվել ստեղծված հնարավորություններից և զարգանալ, իսկ նոր ձևավորվող թաթարական բուրժուազիան դեռևս ի վիճակի չէր հայկականի հետ մրցակցելու: Թե՛ քաղաքաբնակ և թե՛ գյուղաբնակ մուսուլմանները բացասաբար էին տրամադրված հայերի նկատմամբ:

Այսպիսով, Կենտրոնի քաղաքականությունն իրականացնելու նպատակով 1896 թ. Կովկասի հարցերով կառավարչապետ նշանակված Գ. Գոլիցինը հստակ քայլեր է ձեռնարկում մահմեդականների դերը կայսրությունում ուժեղացնելու և հայերի ազդեցությունը թուլացնելու ուղղությամբ: Գոլիցինը փակում է հայկական դպրոցները, հալածանքներ սկսում հայ գործիչների նկատմամբ, քաղաքացիական ծառայության ոլորտում պաշտոններ զբաղեցնող հայերի թիվը կտրուկ կրճատում է աշխատանքի է ընդունել տալիս մահմեդականներին: 1903 թ. ընդունվում է նաև Հայոց եկեղեցու գույքի բռնագրավման մասին օրենքը: Գոլիցինի քաղաքականությունը շարունակում է Բաքվի նահանգապետ Միխայիլ Նակաշիձեն, որը թույլ է տալիս մահմեդականներին մեծ քանակությամբ զենք ձեռք բերել: Դա հետագայում գործադրվեց հայ-թաթարական բախումների ժամանակ[10]:

1905 թ. ամռանը և աշնանը բրիտանացի հեղինակ Լուիջի Վիլլարին եղել է Կովկասում, այցելել հայ-թաթարական բախումների հիմնական վայրերը: Նա նշում է, որ թաթարներին ոգևորում էր կայսրության հայատյաց քաղաքականությունը, և նրանք դրանից օգտվում էին՝ զգալով, որ անպատիժ մնալու հավանականությունը մեծ է: Նա հայ-թաթարական արյունահեղությունը դիտում է ավելի լայն ենթատեքստում՝ «թշնամություն ժամանակակից գաղափարների և ասիական բարբարոսության միջև»[11]: Վիլլարին գրում է նաև, որ, ըստ մեկ այլ տեսակետի, որին հակված էին շատ հայեր, ջարդերը համաիսլամական շարժման մասն էին կազմում, իսկ թաթարների թիկունքում կանգնած էին և բախումները կազմակերպել էին Պոլիսը և Թեհրանը: Հակահայ քարոզչության և հայկական կոտորածների կազմակերպման կենտրոնը հա-

---

[9] Տե՛ս http://www.kitabxana.me/sventoch.htm (մուտք՝ 06.11.2018):

[10] Տե՛ս **Տ. Հայրապետյան,** նշվ. աշխ., էջ 17-18:

[11] https://www.aniarc.am/2015/09/04/armeno-tatarazerbaijan-clashes-1905-1906-armenian-text/ (մուտք՝ 26.10.2018):

մարվում էր Բաքվի «պանիսլամական կոմիտեն»՝ ի դեմս պանթյուրքական հակումներով թաթարական մտավորականության ներկայացուցիչների, որոնց ղեկավարում էին Ահմեդ Աղաևը և Ալի Մարդան բեկ Թոփչիբաշևը: Հայերի շրջանում տարածված էր այն կարծիքը, որ կազմակերպիչները ոգեշնչված էին այն կոտորածներով, որոնք կատարվել էին 19-րդ դարի վերջերին՝ սուլթան Աբդուլ Համիդի օրոք, և ընդհանրապես Օսմանյան կայսրության տարածքում վարվող հակահայ քաղաքականությունով: Ժամանակի եվրոպական մամուլը ևս առաջին հերթին ընդգծում էր ցարական իշխանությունների հրահրիչ դերակատարությունը և 1905 թ. Ռուսաստանում տեղի ունեցող հեղափոխության նկատմամբ հայերի ու թաթարների տարբեր դիրքորոշումները. հեղափոխական ոգով համակված հայերը վտանգ էին ներկայացնում ցարական իշխանությունների համար[12]: Վարանդյանը բերում է մեկ այլ ծանրակշիռ հանգամանք. անդրկովկասյան գիտակից թաթարների աչքին հայն անհաշտ հակառակորդ էր նաև այն պատճառով, որ նա տասնյակ տարիներ ի վեր կռիվ էր մղում ցեղակից թուրքական կայսրության դեմ՝ ձգտելով Եվրոպայի օգնությամբ ստեղծել ազատ, ինքնավար Հայաստան[13]: Թաթարներն իրենց հերթին բախումներ հրահրելու և արյունահեղության պատասխանատվությունը բարդում էին դաշնակցության վրա: Թաթար հրապարակախոս Մամեդ Սայիդ Օրդուբադին իր «Արյունոտ տարիներ» գրքում նշում է ջարդերի մի քանի պատճառներ. բախումների ընթացքում, հայերի գործողություններից սարսափահար և հեղափոխությամբ տարված, կառավարական չինովնիկները դրսևորեցին լիակատար անտարբերություն, թաթարների հետամնացությունը հնարավորություն չտվեց համարժեք պատասխան տալու հայկական սադրանքներին, և վերջապես՝ հայերը երազում էին ինքնավարության մասին[14]: Նա հատկապես մեղադրում է դաշնակցությանը, իբր, զինված հայերը Բաքվում հետևում են մուսուլմաններին, և օժանդակություն են ստանում Հայոց եկեղեցուց: Եվ ընդհանրապես, ոչ միայն Օրդուբադին, այլև մի շարք թաթար հետազոտողներ, այդ թվում՝ Միր Նոհայուն Նավվաբը, Հայոց եկեղեցուն ներկայացնում են որպես այդ ջարդերի հրահրիչ և կազմակերպիչ, այնինչ հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանը դիմումներ էր հղում ցարական աստիճանավորներին՝ ընդհարումներին վերջ տալու համար կտրուկ քայլեր ձեռնարկել, իսկ մուսուլմանների հոգևոր առաջնորդի հետ հանդիպմանը հայոց կաթողիկոսը կոչ էր արել համատեղ միջոցառումներ ձեռք առնել երկու ժողովուրդների կոտորածները կանխելու համար: Կենտ-

[12] Տե՛ս https://dic.academic.ru/dic.nsf/ruwiki/118001 (մուտք՝ 26.10.2018):

[13] Տե՛ս https://www.aniarc.am/2015/04/02/armenian-tatar-azeri-clashes-1905-07/ (մուտք՝ 26.10.2018):

[14] Տե՛ս **Məmməd Səid Ordubadi,** Qanlı illər (1905-1906-cı illərdə Qafqazda baş vermiş erməni -müsəlman davasının tarixi), “Qafqaz”, Bakı, 2007:

ռոնական իշխանությունների բացարձակ անգործության պայմաններում հայոց կաթողիկոսը խոսքից անցնում է գործի՝ օժանդակություն ցուցաբերելով հայ ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպմանը: Որպես իր գործողությունների հիմնավորում՝ փոխարքայի հետ հանդիպմանը Խրիմյանը նշել էր, որ իշխանությունների անգործության հետևանքով պետության նկատմամբ հավատը կորցրած արևելահայությանը մնում էր մեկ միջոց՝ ինքնապաշտպանությունը[15]: Օրդուբադին գրում է, որ մուսուլմաններն անտեղյակ էին անցուդարձերից և ի տարբերություն հայերի՝ զինված չէին: Նավվաբն իր հերթին պնդում է, որ Կենտրոնից երկու ժողովուրդների նկատմամբ վերաբերմունքը տարբեր էր: Ցարի հրամանով կովկասյան թաթարներին արգելվել էր զենք կրել, իսկ հայերին որոշակի արտոնություններ էին տրվել, ինչից օգտվելով՝ նրանք հեշտությամբ կոտորում էին թաթարներին[16]: Ադրբեջանցի հետազոտողները հայ-թաթարական բախումները մեկնաբանում են հայերի կողմից կովկասյան թաթարների պատմական տարածքները խլելու և դարեր շարունակ իրագործված «ցեղասպանության» մի օղակ: Ըստ նրանց՝ ադրբեջանցիների դեմ հայերի ագրեսիայի հիմնական պատճառը էթնիկ զտման քաղաքականության իրականացմամբ Ադրբեջանի պատմական հողերի հաշվին հայկական պետություն հիմնադրելն էր և ապա տարբեր ճանապարհներով դա ընդարձակելը: Ադրբեջանցի հետազոտող Այդըն Բալաևի խոսքով՝ «Ադրբեջանական ազգային շարժումը խորհրդանշում էր պայքարը հանուն նորմալ կենսապայմանների ստեղծման, ազգային լեզվի ու մշակույթի զարգացման: Ցարական Ռուսաստանը, որը ժողովուրդներին բաժանում էր հետամնացների և ոչ հետամնացների, գտնում էր, որ հետամնացների հետ վարվելու միակ ձևը կոպտությունն է: Նրանց վրա միջազգային օրենքները չեն տարածվում: Նրանց հետ կարելի է խոսել ճնշումների ձևով: Քրիստոնյա ժողովուրդներին դարձնելով իր հենարանը՝ Ռուսաստանը ձգտում էր նվազեցնել ադրբեջանական և ընդհանրապես մուսուլմանական էթնոսի դերն ու նշանակությունը»[17]: Ռուսաստանը ձգտում էր նաև ծայրամասերը պահել ագրարային հետամնաց վիճակում, խոչընդոտում էր ադրբեջանական բուրժուազիայի, արդյունաբերության զարգացումը: Սակայն, ինչպես նշում է Ռասուլզադեն, չնայած իր թերություններին՝ ցարական իշխանության քաղաքականությունը նպաստեց, որ ադրբեջանցիներն իրենց որպես ազգ ընկալեն[18]:

Ժամանակի ընթացքում հայ-թաթարական հակասությունները

---

[15] Տե՛ս «Ամենայն Հայոց կաթողիկոսներ», հանրագիտարան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2008.

[16] Տե՛ս **Mir Möhsün Nəvvab,** 1905-1906-cı illərdə erməni-müsəlman davası, Bakı, 1993.

[17] **Балаев А.** Азербайджанское национальное движение в 1917-1918 гг. Баку: ЕЛМ, 1998, с. 13-14.

[18] Տե՛ս նույն տեղը, էջ 19:

տարածաշրջանի խոշոր քաղաքներում այն աստիճան սրվեցին, որ ուր որ է պետք է պայթյուն տեղի ունենար: Ցարական կառավարության համար Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության ակտիվիստների՝ ցարական չինովնիկների վրա հարձակման միջադեպից պարզ դարձավ, որ այդ հարցում մուսուլմանները չեզոք են: Քաղաքային խորհրդարանում մուսուլման պատգամավորները անցան իշխանությունների կողմը: Հայ հեղափոխականները սպառնում էին հարձակվել իսլամական զորամիավորումների վրա: 1905 թ. հունվարին Բաքվի չայխանաներում, որտեղ քարոզիչները բարձրաձայն թերթեր էին կարդում անգրագետ մարդկանց համար, արագորեն տարածվեցին այն լուրերը, թե հայ ահաբեկիչները աշուրայի օրը պատրաստվում են հարձակվել իսլամական կազմակերպությունների վրա, ինչն էլ ավելի սրեց հակահայ տրամադրությունները:

Երբ 1905 թ. փետրվարի 6-ին մի քանի հայեր Բաքվի կենտրոնում գնդակահարեցին նավթագործ մի մուսուլմանի, քաղաքում սկիզբ առան 5-օրյա բախումներ:

Բաքվի շրջանային դատարանի դատախազը Պետերբուրգում զեկուցում է, որ բնակչության շրջանում խուճապ է սկսվել: Մուսուլմանական զինված խմբավորումները, որոնք Բաքու էին եկել արդյունաբերական կենտրոններից և հարակից գյուղերից, կոտորում են իրենց ճանապարհին հանդիպած բոլոր հայերին: Երկրորդ օրը կատաղած ամբոխը հարձակվում ու տակնուվրա է անում և թալանում քաղաքի՝ հայերին պատկանող բոլոր կրպակները: Սպանությունների և ջարդերի ալիքը հասնում է նավթարդյունաբերական շրջաններ: Այսպես՝ միայն մեկ օրում Պիտոնի ֆաբրիկայի տարածքում գտնվող բնակելի թաղամասում փետրվարի 8-ին գնդակահարվում է շուրջ 40 հայ:

Տեղական իշխանությունները չէին շտապում սաստել անկարգությունները, թեպետ նահանգապետի անմիջական մասնակցությունը վկայող փաստեր, որ փորձում էր բանվորական ելույթները դադարեցնել, ևս չկան: Ոստիկանությունը կրավորական դիրք էր բռնել: Ոստիկանապետը 50 կազակների ուղեկցությամբ շրջում էր հրդեհված քաղաքում և չէր փորձում միջամտել իրադարձություններին: Առանձին հայերի, որոնք փորձում էին փախչել և փրկվել, կազակները բռնում ու հանձնում էին մուսուլմաններին: Նահանգապետ Նակաշիձեն, որը հայտնի էր իր հայատյացությամբ, նույնպես չմիջամտեց: Արյունահեղությունների երկրորդ օրը նրան տեսել են քաղաքում հանգիստ շրջելիս: Նա այդպես էլ արյունահեղությունները դադարեցնելու հրաման չտվեց: Միայն փետրվարի 10-ի առավոտյան դադարեցին կոտորածները Բաքվում:

1905 թ. օգոստոսին կոնֆլիկտը քաղաքում կրկին սրվեց: Հայ թաթարական բախումների ընթացքում քաղաքը նյութական մեծ վնաս

կրեց: Ամռանը Բաքուն վերածվեց ծխացող դժոխքի, որտեղից խուճապահար փախան հազարավոր բանվորներ: Այդ ամռանը ազգամիջյան բախումներ սկսվեցին գրեթե բոլոր բնակավայրերում՝ հատկապես Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում, որտեղ թաթարներն ու հայերն ապրում էին կողք կողքի: Ելիզավետպոլում զինված բախումները շարունակվեցին 1905 թ. ամռանից մինչև 1906 թ. հունվար: 1905 թ. հուլիսին գրեթե ամբողջությամբ ավերակների էր վերածվել Շուշի քաղաքը: Թիֆլիսի դատական պալատի դատախազը սարսափած գրում է, որ բախումներին մասնակցում է գրեթե ողջ բնակչությունը[19]: 1905 թ. ամռանը հակամարտությունը տարածվեց նաև գյուղերում և Բաքու-Ելիզավետպոլ երկաթուղու ու Շուշի-Ելիզավետպոլ ավտոճանապարհի երկայնքով: Մուսուլմանական և հայկական էլիտաները գործում էին անասելի դաժանությամբ: Կրակն ավելի էին բորբոքում քուրդ և քոչվոր մի շարք ցեղեր, որոնք հարձակվում էին հայկական գյուղերի վրա: Մի քանի ամիս շարունակ դաշնակցության ջոկատները իրենց վերահսկողության տակ պահեցին ԼՂ-ն, իսկ հյուսիսը և հարավ-արևելքը գտնվում էին մուսուլման գյուղացիների վերահսկողության տակ: Ինքնակալությունը իրավիճակի հսկողությունը վերցրեց իր ձեռքը միայն 1906 թ.՝ Ելիզավետպոլ և Բաքու ուղարկելով արշավախումբ, որը, միջոցների մեջ խտրություն չդնելով, խիստ պատժի ենթարկեց անկարգությունների կազմակերպիչներին: Ներքին գործերի նախարարը Անդրկովկասյան բոլոր գյուղերում ռազմական դրություն հայտարարեց և ռազմական դաշտային դատավարություններ սկսեց Ելիզավետպոլում ու Բաքվում: Իրավիճակը խաղաղեցնելու նպատակով պաշտոններից հեռացվեցին մուսուլման ու հայ ոստիկանները, և նրանց փոխարեն այլազգի ներկայացուցիչներ նշանակվեցին: Երկու կողմերին արգելվեց կոնֆլիկտային լոզունգներ հրատարակել, ինչի պատճառով փակեցին մի շարք թերթեր:

Ընդհանուր առմամբ՝ հայ-թաթարական բախումների ընթացքում հայերը ավելի շատ տուժեցին Բաքվում և Նախիջևանում, իսկ թաթարները՝ Շուշիում, Երևանում և Թիֆլիսում: Հայ-թաթարական առաջին կոտորածների ընթացքում սպանվածների ընդհանուր թվի հստակ տեղեկություններ չկան: Թադեուշ Սվյատոխովսկին նշում է 3-ից մինչև 10 հազար թիվը[20]: Ֆիլիպ Մախարաձեի տվյալներով՝ 1905 թ. փետրվարին Բաքվում սպանվել է ավելի քան 1000 մարդ, մեծամասնությունը՝ հայեր: Իսկ 1905-1907 թթ. հայ-թաթարական բախումները, ըստ նրա, խլել են ավելի քան 10 հազար կյանք: Դավիթ Անանունին գրում է, որ թա-

---

[19] Տե՛ս **Баберовски Й.,** նշվ. աշխ., էջ 75-77:

[20] Տե՛ս http://dictionnaire.sensagent.leparisien.fr/%D0%90%D1%80%D0%BC%D1%8F%D0%BD%D0%BE%D1%82%D0%B0%D1%82%D0%B0%D1%80%D1%81%D0%BA%D0%B0%D1%8F%20%D1%80%D0%B5%D0%B7%D0%BD%D1%8F%201905%E2%80%941906/ru-ru/ (մուտք՝ 27.10.2017):

լանվել ու ավերվել են 128 հայկական և 158 թաթարական գյուղեր[21]:

Միմյանց հարևանությամբ ապրող ժողովուրդների, մասնավորապես հայերի ու կովկասյան թաթարների միջև այլատյացության առանձին դրսևորումներ միշտ էլ եղել են, սակայն 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ցարական իշխանությունները դրանք հասցրին պետական քաղաքականության մակարդակի և օգտագործեցին սեփական խնդիրները լուծելու, իրենց ծրագրերն իրագործելու նպատակով: Նախ խորացվեց այլատյացությունն արդյունաբերության և հատկապես Բաքվի նավթարդյունաբերության մեջ իրենց ձեռներեցությամբ աչքի ընկնող հայերի ու հիմնականում սնագործ թաթար բանվորների միջև, ապա այդ հակամարտությունը վերածեցին բացահայտ թշնամանքի՝ երկու կողմերին միմյանց դեմ հանելու, թուլացնելու, ջլատելու և առանձին-առանձին հնազանդեցնելու նպատակով: Այսինքն՝ 1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումները Ռուսաստանի առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխության (1905-1907 թթ.) ժամանակ ժողովրդի ուժերը մասնատելու նպատակով Անդրկովկասում ցարական իշխանությունների հրահրած ազգամիջյան բախումներ էին: Պետք է փաստել նաև, որ այդ ընդհարումները մեծապես նպաստեցին թաթարների շրջանում ազգային ինքնության և հավաքական ինքնագիտակցության ձևավորմանն ու զարգացմանը՝ հետագայում հիմք դառնալով տարածաշրջանում նրանց՝ տարածքային ու քաղաքական առումով հաստատվելու համար: Սվյատոխովսկին նշում է, որ եթե մինչ այդ կրոնը թաթարներին միավորող գործոնը կրոնն էր, ապա նրանց՝ որպես ազգ կայանալու գործում որոշակի դեր ունեցավ հայի՝ որպես հակառակորդի կերպարի ձևավորումը: Երբ բախումների ժամանակ հնչում էր «մահ անհավատներին» կարգախոսը, դա թաթարներն ընկալում էին ոչ թե բոլոր ոչ մուսուլմաններին, այլև առաջին հերթին հայերին[22]:

Բանալի բառեր – *կովկասյան թաթարներ, հայեր, ազգային քաղաքականություն, ազգային ինքնության ձևավորում*

ТАТЕВИК САРГСЯН – ***Армяно-татарские столкновения в контексте национальной политики Российской империи.*** – В статье, посвящённой армяно-татарским столкновениям начала минувшего века, выявляются их причины и последствия. Особое внимание уделено тому, как царские власти провоцировали эти столкновения, разжигая противоречия между кавказскими татарами и армянами и превращая это в дело государственной важности. Такая политика преследовала цель поднять обе стороны друг на друга, ослабить их и, разъединив, покорить своей воле. При этом столкновения 1905-1906 гг. стимулировали зарождение и развитие национального самосознания у кавказских татар.

---

[21] Տե՛ս https://www.aniarc.am/2015/09/04/armeno-tatarazerbaijan-clashes-1905-1906-armenian-text/ (մուտք՝ 26.10.2018):

[22] Տե՛ս http://www.kitabxana.me/sventoch.htm (մուտք՝ 06.11.2018):

Ключевые слова: *кавказкие татары, армяне, национальная политика, формирование национальной самостоятельности*

TATEVIK SARGSYAN – *The Armenian-Tatar Clashes in the Context of the Russian Empire National Policy.* – This article aims to illustrate the Armenian-Tatar clashes at the beginning of the 20th century, to find out the causes and consequences of their emergence and to present the role of the Russian Empire policy in inciting conflicts. At the end of the 19th century and the beginning of the 20th century, the tsarist authorities turned xenophobia between Caucasian Tatars and Armenians into a state policy, pursuing the aim of opposing the two sides, weakening and undermining them and making them obey separately. The clashes provoked in 1905-1906 fostered the formation and development of the national identity and collective self-consciousness among Tatars.

Key words: *Caucasian Tatars, Armenians, national policy, national identity formation*

Ներկայացվել է՝ 03.06.2019
Գրախոսվել է՝ 25.11.2019
Ընդունվել է տպագրության՝ 29.11.2019